Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունվարի 31-ին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում հանդիսավորությամբ նշվեց Ս. Վարդանանց տոնը: Միջոցառումն սկսվեց միասնական Տերունական աղոթքով, որից հետո ճեմարանականները կատարեցին Ս. Ներսես Շնորհալու «Նորահրաշ պսակաւոր» շարականը: Օրվա խորհրդի մասին բանախոսությամբ հանդես եկավ ճեմարանի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Գրետա Անդրեասյանը: Ճեմարանականները հանդես եկան զեկուցումներով, ասմունքով, ինչպես նաև Վարդանանց նվիրված թատերական բեմականացմամբ, որն ուղեկցվում էր օրվա խորհրդին նվիրված շարականների երգեցողությամբ:

Հանդիսության ավարտին կազմակերպիչներին և մասնակիցներին իր գնահատանքը հայտնեց ճեմարանի ադմինիստրատոր Հարություն սրկ. Համբարձումյանը:

Այնուհետև ներկաներին իր սրտի խոսքն ուղղեց նաև հնդկահայոց հոգևոր հովիվ և ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Հայր Սուրբը շնորհավորեց բոլորին օրվա կապակցությամբ՝ շեշտելով, որ Հայոց Եկեղեցու ընկալյալ ավանդույթի համաձայն՝ Ս. Վարդանանց տոնը նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության տոնն է, ուստի նաև պիտի աղոթենք Հայոց Հայրապետի կենաց արևշատության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության համար: Նա ճեմարանականներին հորդորեց, որ իրենց սրտերում միշտ հպարտությամբ արթուն պահեն Ս. Վարդանանց անպարտելի ոգին՝ քաջ գիտակցելով, որ հավատքից, Մայր Եկեղեցուց, ազգային արժեքներից և արմատներից հեռացած հայը հեշտությամբ կարող է օտարանալ:

«Իրավունք չունենք մոռանալու, որ մեզ միացնող միակ կապը, որի պաշտպանության համար դարեր շարունակ պայքարի էին ելել Ս. Վարդանանք, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին է՝ իր քրիստոնեական և ազգային բովանդակությամբ»,- նշեց Հայր Սուրբն իր խոսքում:

Հանդիսությունն ավարտվեց Տերունական և «Պահպանիչ» աղոթքներով:

ԴԻՎԱՆ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ